ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
փաստաբան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեռահաղորդակցման գործընթացում առանցքային նշանակություն ունեն էլեկտրոնային փաստաթղթերը: Սույն գիտական աշխատության սահմաններում կքննարկվեն էլեկտրոնային փաստաթղթի հասկացությանը և առանձնահատկություններին վերաբերող հիմնախնդիրները: Աշխատանքի ծավալի մեջ ներառված է նաև «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան գիտական գրականության համեմատական վերլուծություն:

Հիմնաբառեր *– էլեկտրոնային փաստաթուղթ, անհատականացնող տվյալներ, էլեկտրոնային թվային ստորագրություն:*

Տեղեկատվական հասարակության ձևավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և լայն կիրառումը պայմանավորում են էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման և դեպի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն անցնելու հնարավորությանը վերաբերող հարցերի առավել արդիականացումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մատչելիությունը նպաստել է համակարգչային տեխնիկայի լայն տարածմանը և հեռահաղորդակցման համաշխարհային ցանցերի ստեղծմանը, ինչը իր հերթին նոր հնարավորություններ է ստեղծել հասարակական հարաբերությունների զարգացման համար: Հասարակական հարաբերությունների զարգացման արդյունքում փոխակերպման է ենթարկվել նաև հասարակությունը, որը պայմանականորեն անվանում են տեղեկատվական հասարակություն:

Ստեղծված հասարակական հարաբերությունները համապատասխանաբար պահանջում են իրավական կարգավորում, որը պետք է խթանի այդ հարաբերությունների հետագա զարգացումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում հարկավոր է նշել, որ հեռահաղորդակցման գործընթացում առանցքային նշանակություն ունեն էլեկտրոնային փաստաթղթերը:

Այս աշխատության սահմաններում կքննարկվեն էլեկտրոնային փաստաթղթի հասկացությանը և առանձնահատկություններին վերաբերող հիմնախնդիրները:

Սակայն, մինչ էլեկտրոնային փաստաթղթի հասկացությանը վերաբերող խնդիրներին անդրադառնալը, հարկավոր ենք համարում վերլուծել ընդհանրապես «փաստաթուղթ» հասկացությունը:

Փաստաթուղթը սահմանվում է որպես առհասարակ թուղթ՝ գրություն, որը կարող է վկայություն՝ ապացույց, հանդիսանալ որևէ բանի համար:

Տվյալ բացատրությունը մեկնաբանում է փաստաթղթի հասկացության էությունը որպես նյութական աշխարհի օբյեկտի: Կարելի է առանձնացնել փաստաթղթերի մի քանի տեսակ, սակայն ժամանակակից փաստաթղթերի հիմնական տեսակներ են համարվում թղթային կրիչների վրա արտացոլված փաստաթղթերը և էլեկտրոնային փաստաթղթերը:

Իրենց նշանակությամբ փաստաթղթերը բաժանվում են երեք հիմնական խմբի՝ պաշտոնական փաստաթղթեր, ոչ պաշտոնական փաստաթղթեր և անձնական ծագման փաստաթղթեր: Պաշտոնական փաստաթղթերը իրենց հերթին պայմանականորեն բաժանվում են մի քանի խմբի, որոնցից մեկը կրում է «դատավարական» անվանումը: Այս խմբի փաստաթղթերը ստեղծվում են համապատասխան լիազորություններով օժտված վարչական, քաղաքացիական և քրեական դատավարությունների մասնակիցների կողմից:

Հատկանշական է, որ փաստաթուղթը պետք է իր մեջ պարունակի որոշակի անհատականացնող տվյալներ, առանց որոնց այս կամ այն կերպ արձանագրված տեղեկությունը չի կարող համարվել փաստաթուղթ:

Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել անհատականացնող տվյալների չորս հիմնական խումբ, որոնք տարբերակվում են իրենց նշանակությամբ ու տեղադրման եղանակով:

Փաստաթղթի տեքստը՝ տառերով և թվերով կրիչի վրա արձանագրված տեղեկատվությունը, որը սահմանափակված է միասնական իմաստա-

յին նշանակությամբ՝ անկախ տեղադրման եղանակից:

Ստորագրությունը՝ տեքստի տարատեսակ, որը իրենից ներկայացնում է համապատասխան լիազորված պաշտոնատար, ֆիզիկական անձի կամ անձանց ստորագրություն:

Պատկեր՝ նշանների, գծերի, կետերի, գույների միջոցով որևէ օբյեկտի պատկերում՝ անկախ դրա կատարման կամ ամրացման եղանակից:

Կնիքներ, դրոշմակնիքներ՝ տեղեկատվություն, որը տեղադրվում է մեխանիկական եղանակով և կարող է պարունակել տեքստ, պատկեր կամ դրանց համադրություն:

Տարբեր պայմաններում ռեկվիզիտները կարող են ունենալ մեկ կամ մի քանի գործառույթ: Այսպես, օրինակ, տեքստը և պատկերը, որպես կանոն, իրականացնում են տեղեկատվական գործառույթ: Ստորագրությունը իրականացնում է ինչպես հավաստող գործառույթ, այնպես էլ պաշտպանիչ գործառույթ, քանի որ այն հանդիսանում է ստորագրող անձի յուրահատուկ բիոմետրիկ նկարագիր:

Էլեկտրոնային փաստաթուղթը դիտարկելով որպես ժամանակակից փաստաթղթի տարատեսակ՝ անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությունը:

Մասնագիտական գրականության մեջ «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությանը տրվում են մի շարք սահմանումներ: Այսպես, օրինակ, Ն.Ա.Իվանովը «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությունը բնորոշում է որպես ֆայլ, որը պարունակում է փաստաթղթային տեղեկատվություն՝ տեքստի, պատկերի կամ ձայնի տեսքով, որը ունի անհատականացման համար համապատասխան ռեկվիզիտներ:

Վ.Ի.Տիխոնովը գտնում է, որ յուրաքանչյուր թվայնացված տեղեկատվություն հանդիսանում է էլեկտրոնային փաստաթուղթ, եթե այն պարունակում է անհատականացման համար անհրաժեշտ տվյալներ: Այսինքն, Տիխոնովը ընդգծում է փաստաթղթի անհատականացման անհրաժեշտությունը, ինչը միանշանակ էական նշանակություն ունի:

Էլեկտրոնային փաստաթուղթը, ինչպես թղթային տարբերակով փաստաթուղթը, պետք է ունենա անհատականացման հնարավորություն, որը թույլ կտա առանձնացնել այն ֆայլերի զանգվածի միջից և/կամ գտնել այն մեքենայական կրիչի մեջ: Էլեկտրոնային փաստաթղթի հիմնական ռեկվիզիտներ են համարվում ֆայլի անվանումը, ֆայլի ֆորմատը, ֆայլի չափը, ֆայլի ստեղծման և կատարված վերջին փոփոխության ամսաթիվը, ֆայլային համակարգում դրա տեղակայումը:

Համաձայն, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝

(…)

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

(…):

Ելնելով շարադրված իրավադրույթի բովանդակությունից՝ կարելի է եզրակացնել, որ իրավակիրառ պրակտիկայում էլեկտրոնային փաստաթղթին (որպես փաստաթղթի տեսակի) ներկայացվող անհատականացման հնարավորության պարտադիր պայմանը հնարավոր է իրացնել միայն էլեկտրոնային փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու դեպքում:

Համադրելով վերը հիշատակված էլեկտրոնային փաստաթղթի հեղինակային սահմանումները և էլեկտրոնային փաստաթղթի հաստատման ու անհատականացման հնարավորությունը՝ կարծում ենք, որ դրանք չեն արտացոլում էլեկտրոնային փաստաթղթի առանձնահատկությունները: Այսպես, դրանցում բացակայում է հաստատման և անհատականացման համար պարտադիր էլեկտրոնային թվային ստորագրության վերաբերյալ որևէ նշում: Այդպիսի սահմանման պայմաններում կարելի է գալ եզրակացության, որ տեքստային տեղեկատվություն պարունակող յուրաքանչյուր ֆայլ, որի սկզբնամասում առկա է որևէ հաստատության անվանում և տարբերանշան (ռեկվիզիտներ), հանդիսանում է էլեկտրոնային փաստաթուղթ: Մինչդեռ, մեր կարծիքով, էլեկտրոնային փաստաթուղթը պետք է պարտադիր հաստատված լինի այն կազմող անձի կամ անձանց էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որպեսզի հնարավոր լինի այն անհատականացնել և հավաստիանալ դրանում առկա տեղեկատվության իսկության մեջ: Հակառակ դեպքում որոշակի տեղեկատվություն պարունակող ֆայլը չի կարող համարվել էլեկտրոնային փաստաթուղթ, քանի որ կզրկվի անհատականացման հնարավորության ներկայացված պարտադիր պայմանից:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում անդրադառնալ նաև «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացության օրենսդրական սահմանմանը:

Այսպես, համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝

(…)

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկություն կամ հաղորդագրություն.

(…):

Մեջբերված օրենսդրական սահմանումը նույնպես չի արտացոլում էլեկտրոնային փաստաթղթի էությունը: Մեջբերված օրենսդրական սահմանման համաձայն՝ յուրաքանչյուր թվայնացված տեղեկություն կամ հաղորդագրություն պետք է դիտարկել որպես էլեկտրոնային փաստաթուղթ: Օրենսդրական մեջբերված սահմանումը չի համապատասխանում ընդհանրապես փաստաթղթին բնորոշ հատկանիշներին և առավել ևս չի պարունակում էլեկտրոնային փաստաթղթի էության բնորոշում: Գտնում ենք, որ մեջբերված օրենսդրական սահմանումը պետք է ենթարկել անհրաժեշտ փոփոխության և այն պետք է համապատասխանեցնել էլեկտրոնային փաստաթղթի էության բովանդակությանը:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է ընդգծել էլեկտրոնային փաստաթղթին բնորոշ հետևյալ առանձնահատկությունները՝

- Էլեկտրոնային փաստաթուղթը կարող է ստեղծվել բացառապես համակարգչային տեխնիկայի գործադրմամբ,
- Էլեկտրոնային փաստաթղթի մեջ արձանագրված է թվային տեղեկատվություն,
- Էլեկտրոնային փաստաթուղթը հաստատվում և անհատականացվում է միայն էլեկտրոնային թվային ստորագրության միջոցով:

Հաշվի առնելով էլեկտրոնային փաստաթղթերին հատուկ առանձնահատկությունները՝ գտնում ենք, որ «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացության օրենսդրական սահմանումը պետք է փոփոխել և շարադրել հետևյալ կերպ.

«Համակարգչային տեխնիկայի միջոցով ստեղծված ֆայլում արձանագրված թվային տեղեկատվություն, որը հաստատվում և անհատականացվում է մեկ կամ մի քանի անձանց էլեկտրոնային թվային ստորագրությունների և այլ ռեկվիզիտների միջոցով»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Доктринальная модель уголовно-процессуального доказательственного права Российской Федерации и комментарии к ней / под ред. А.С.Александрова. М.: Юрлитинформ, 2015.
2. Иванов Н.А. Цифровая информация в уголовном процессе // Библиотека криминалиста. Научный журнал/ 2013. N 5 (10).
3. Тихонов В.И. Сущностные характеристики, состав и классификация электронных документов /В книге “Документация в информационном обществе: электронное делопроизводство и электронный архив”. - М.: Росархив. ВНИИДАД. РОИА. – 2000.
4. Иванов Н.А.Установление подлинности, времени изготовления и источника происхождения документов (настольная книга практикующего юриста). Омск: АНО ЦРЭ “Лаборатория экспертных исследований”, 2015.
5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1980:

Зорайр Арутюнян
Адвокат,
член палаты адвокатов Республики Армения

РЕЗЮМЕ

Понятие и особенности электронного документа

Электронный документ имеет ключевое значение в процессе коммуникации. В рамках данной научной работы будут рассмотренны основные проблемные вопросы относительно понятия и особенностей электронного документа. В объеме данной работы включен сравнительный анализ между Законом РА “об электронном документе и электронной цифровой подписи” и соответствующей научной литературой.

***Ключевые слова**: электронный документ, идентифицирующие данные, электронная цифровая подпись.*

Zorayr Harutyunyan
Advocate, member of the chamber of advocates
of the Republic of Armenia

SUMMARY

The concept and features of an electronic document

Annotation: Electronic documents are crucial for the communication process nowadays. In the current scientific work the main issues relating to the concept and the characteristics of the electronic document will be discussed. Comparative analysis of the law of the RA on “Electronic document and electronic digital signature” and the relevant scientific literature, is also presented in the work.

***Keywords**: electronic document, identification data, electronic digital signature.*